ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Արարատ Ստեփանյան

ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ

Հիմնաբառեր. *Փիլարտոս Վարաժնունի, պատմական աղբյուրներ, գրություն, կնիք, տիտղոս, Մանազկերտ, Անտիոքի դուքս, Բյուզանդիա:*

ՄՈՒՏՔ. ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

XI դ. երկրորդ կեսին Բյուզանդական կայսրությունը ներքին ու արտաքին քաղաքականության մեջ լուրջ դժվարությունների հանդիպեց. դա մասնավորապես կապված էր սելջուկ-թյուրքերի արշավանքների հետ, որոնք, արևելքից արշավելով, երկիրը ծանր կացության մեջ էին դրել: Կայսրության դրությունն առավել վատթարացավ 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո: Մանազկերտում բյուզանդական բանակի կրած ծանր պարտությունից հետո կայսրությունում քաոս ու խուճապ ստեղծվեց: Իրավիճակը իրենց քաղաքական շահերի համար օգտագործեցին կայսրությունում զինվորական ծառայության մեջ գտնվող մի շարք գործիչներ, այդ թվում Փիլարտոս (Վահրամ) Վարաժնունին: Փիլարտոսը հսկայական դերակատարություն ունեցավ Անիի Բագրատունյաց թագավորության կործանումից հետո հայրենիքից հեռացած և Կիլիկիայում ու Միջագետքում հաստատված ստվար թվով հայության համախմբման և հայկական իշխանությունների ձևավորման գործում:

Փիլարտոս Վարաժնունու կենսագրությունը մինչև 1069 թ. գրեթե հայտնի չէ[1]: Նրա մասին առաջին հավաստի տեղեկությունները կապված են սելջուկների դեմ Ռոմանոս Դ Դիոգենես (1067-1071 թթ.) կայսեր իրականացրած արշավանքի հետ (1069 թ.)[2]: Ինչպես վկայում են բյուզանդացի հեղինակներ Հովհաննես Սկիլիցեսի շարունակողը և Միքայել Ատտալիատեսը, կայսրը զորքով հասել է Ռոմանոպոլիս[3] և այնտեղից Խլաթ գնալու նպատակով զորքը բաժանել երկու մասի՝ մեծ մասը թողնելով Ֆիլարետոս զորավարի հրամանատարության ներքո, իսկ փոքրը գլխավորել անձամբ ինքը՝ հասնելով Եկեղյաց գավառ[4]:

Ֆիլարետոսը նույն Փիլարտոսն է, որը պատմության մեջ հայտնի է Վարաժնունի տոհմանունով: Նա, սկզբում սելջուկների դեմ հաջող մարտեր մղելով, ի վերջո պարտություն կրեց, իսկ նրա զինվորները հեռացան կայսեր զորաբանակը[5]:

Փիլարտոսը երիտասարդությունը անցկացրել է հորեղբոր մոտ՝ Հարսն-Մսուր գավառի Զորվրի-Կոզեռն վանքում: Քաղկեդոնական դառնալու պատճառով Մատթեոս Ուռհայեցին նրան բնութագրելիս «պիղծ» է կոչում[6]:

Պատմագրության մեջ Փիլարտոս Վարաժնունու անձի շուրջ կա բանավեճ: Հայկական աղբյուրներում նրա քաղկեդոնական դառնալը, իսկ հետագայում մահմեդականություն ընդունելը առիթ հանդիսացան բացասական բնութագրումների: Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Յայսմ ժամանակիս բռնակալեցաւ անօրեն և ամենաչար իշխանն Փիլառտոս, որ էր իսկ անդրանիկ որդի

---

* *Հոդվածը ներկայացվել է 14.01.2020 թ., գրախոսվել՝ 24.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] *Տե՛ս Dédéyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, v. 1, Lisbonne, 2003, էջ 19-26: Հմմտ. Степаненко В., Государство Филарета Варажнуни (1071-1084/86 гг.), «Античная древность и средние века», Свердловск, 1975, с. 86.*

[2] *Տե՛ս Ստեփանյան Ա., Փիլարտոս Վարաժնունու իշխանապետությունը (1072-1090թթ.), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2016, էջ 239:*

[3] *Բերդաքաղաք Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհի Բալահովիտ գավառում: Տե՛ս Հակոբյան Թ. և այլք, տեղանունների բառարան, հ. 4 , Ե., 1998, էջ 448:*

[4] *Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմանությունը բնագրից առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1979, էջ 230: Հմմտ. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 17, «Բյուզանդական աղբյուրներ», Զ, Միքայել Ատտալիատես, Պատմություն, թարգմանությունը բնագրից առաջաբան և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Ե., 2015, էջ 70:*

[5] *Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 230:*

[6] *Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 206:*

սատանայի, զի ի յանկանել Տիօժէնին բռնակալեցաւ ի վերայ երկրի՝ այր չարաշունչ, որ էր իսկ սա կարապետ պղծոյ նեռինն՝ դիւաբնակ և այլանդակ չարաչար վարուք: Սա սկսաւ տալ պատերազմ ընդ հաւատացելոցն Քրիստոսի, վասն զի էր սա անհաւատ քրիստոնեայ, ոչ հայ գիտելով զնա և ոչ Հոռոմ՝ վարքն և կրօնքն զՀոռոմոցն ունէր, և հայրենեօքն և մայրենեօքն հայ էր»[1]: Իսկ Սմբատ սպարապետն իր «Տարեգրքում» Փիլարտոսին բնութագրում է որպես անհավատ ու բռնակալ մեկը, ով, վանքից դուրս գալով և զինվորական դառնալով՝ տիրեց բազում գավառների ու բերդերի. «Բռնակալեալ երեւեցաւ անօրէն իշխանն Փիլառտոսն, եւ սկսաւ պատերազմել ընդ հաւատացեալսն Քրիստոսի. քանզի ոչ էր հաստատեալ ի հաւատս ճշմարտիս, զի որ հայ էր եւ ոչ Յոյն, բայց ազգաւ ի հայոց էր ի գաւառէն Հարսընմսրոյ, սնեալ ի վանս եւ լեալ կոպիտ աբեղայ, եւ ելեալ յանապատէ տիրեաց բազում բերդից եւ գաւառաց...»[2]:

Փիլարտոսի անձի հետ կապված առավել անաչառ են բյուզանդա-ասորական սկզբնաղբյուրների տեղեկությունները: Աննա Կոմնենան նրան բնութագրում է որպես արիությամբ և խելքով ճանաչված մի հայի, որը Ռոմանոս Դ Դիոգենեսից ստացավ զինվորական աստիճան[3]: Իսկ Միքայել Ասորին Փիլարտոսին պարզապես հիշատակում է որպես հաղթանդամ և թիկնեղ տղամարդ. «Եւ եկին յերկիրն Մարաշայ, և գտին անդ այր մի հայ ազգաւ՝ Փիլարտոս անուն, այր անձեայ և գեղեցիկ»[4]:

ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Փիլարտոսի մասին տեղեկությունների կարևոր աղբյուր են նրա անունով արճճե կնիքներն ու ստացած պատվաստիճանները: Դրանք կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն, և նրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նորովի դիտարկելու պատմական գործընթացները: Փիլարտոս Վարաժնունու՝ կայսրությունից ստացած պատվատիտղոսները փաստող արճճե կնիքներին անդրադաձել են նշանավոր կնիքագետներ Վ. Շանդրովսկայան[5] և Ժ-Կ. Շենեն[6]: Այս ուսումնասիրությունների շնորհիվ հնարավորություն ենք ստանում ամբողջացնել կայսրությունից տարբեր ժամանակահատվածներում ստացած նրա պատվատիտղոսները:

Սանկտ Պետերբուրգի պետական Էրմիտաժում պահվող Փիլարտոսի արճճե կնիքներից մեկը փաստում է նրա՝ մագիստրոսի և դուքսի կոչմանն արժանանալու հանգամանքը: Կնիքի առաջնամասում պատկերված են սրբապսակով երկու զինվոր. աջ կողմում Ս. Թեոդորոսն է, ձախում՝ Ս. Դեմետրիոսը՝ աջ ձեռքում նիզակ, ձախում՝ վահան: Դարձերեսին վեցտողյան հունարեն գրություն կա և փոքրիկ խաչ. «Աստվա՛ծ, օգնի՛ր Փիլարտոս Վարաժնունուն՝ մագիստրոսին և դուքսին»: Վերջին տողը եզերված է գծիկներով[7]: Այս կնիքում առկա տեղեկությունը երկու իմաստ է պարունակում. այն, որ մագիստրոսը տիտղոս էր, իսկ դուքսը՝ պաշտոն: Պետք է նշել, որ մագիստրոսի տիտղոսը նա ստացել էր 1071-1078 թթ. ընկած ժամանակաշրջանում, իսկ ինչպես ստորև կտեսնենք, 1078 թ. սահմանագիծ է Անտիոքի դուքսի առաջին և երկրորդ հիշատակությունների միջև: Կնիքում նշված դուքսի պաշտոնից կարելի է հետևեցնել, որ նա այս պաշտոնը զբաղեցրեց Անտիոքի կառավարիչ եղած ժամանակ: 1078 թ., երբ Անտիոքի դուքս Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավունու դավադրական սպանությունից հետո հայ զինվորների հրավերը ընդունելով՝ Փիլարտոսը գնաց Անտիոք և կարողացավ իշխանությունը կենտրոնացնել

---

[1] *Նույն տեղում, էջ 206:*

[2] *Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, աշխատասիրությամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, Ս. Ղապար, Վենետիկ, 1956, էջ 78-79: Հմմտ. Աւետիք Տիգրանակերտցի, Գիրք պատմութեանց որ կոչի Գաւականագիրք, համահաւաքեցեալ ի հին գաւականագրաց եւ ի վիպաբանութեանց ի մի, բազմօք երկամբք. յումեմնէ Աւետիսէ աշխատասիրէ Եւդոկացւոյ, տե՛ս L. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. 2, Ե., 2002, էջ 564:*

[3] *Տե՛ս Анна Комнина, Алексиада, вступительная статья, перевод, комментарий Я. Н. Любарского, М., 1965, с. 190.*

[4] *«Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Երուսաղէմ, 1871, էջ 399: Հմմտ. «Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Երուսաղէմ, 1870, էջ 406-407:*

[5] *Տե՛ս Шандровская В., Эрмитажные печати Филарета Врахамия (Вараждуни), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, №3, էջ 36-49:*

[6] *Տե՛ս Cheynet J.-Cl., Theodoridis D. Sceaux byzantins de la collection D. Theodoridis: les sceaux patronymiques. Paris, 2010, p. 48-56.*

[7] *Տե՛ս Шандровская В., նշվ. աշխ., էջ 40: Հմմտ. Cheynet J.-Cl., նշվ. աշխ., էջ 48:*

իր ձեռքում և այստեղ իշխել մինչև 1084 թ[1].՝ սելջուկ-թյուրքերի կողմից քաղաքի գրավումը[2]: Պետք է նշել, որ Փիլարտոս Վարաժնունու ինքնուրույն ռազմաքաղաքական գործունեության ժամանակաշրջանը սկսվեց Մանազկերտի ճակատամարտից հետո, երբ կայսրության դիրքերը արևելքում թուլացան, իսկ Փիլարտոսին հաջողվեց դառնալ անկախ տիրակալ և կազմել 20 հազար զինվորից բաղկացած զորք[3], որն էլ նպաստեց նոր տարածքների նվաճման և իշխանության ձևավորմանը: Փիլարտոսի հիմնած իշխանության սահմանները արևելքից արևմուտք ձգվում էին Եդեսիայից մինչև Կիլիկիայի արևմտյան մասը, հյուսիսից-հարավ՝ Մալաթիայից մինչև Անտիոք[4]: Բյուզանդական կայսրությունը Փիլարտոսին դիտարկում էր արևելքի այն կենսունակ ուժը, որը ի զորու էր դիմակայելու սելջուկների նաճողական արշավանքներին: Ինչպես ստորև կտեսնենք, պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ կայրության կողմից Փիլարտոսին տրված պատվաստիճանների և կոչումների մեծ մասը նրան շնորհվեց հետմանազկերտյան ժամանակահատվածում:

Բելգիայի Թագավորական գրադարանի մեդալների մասնաբաժնում է գտնվում կնիքներից մյուսը, որի առաջնամասում պատկերված է Ս. Թեոդորոսը՝ աջ ձեռքը հենած նիզակին, ձախ ձեռքով վահանը բռնած, իսկ հակառակ կողմում կա հունարեն գրություն. «Աստվա՛ծ, օգնի՛ր Փիլարտոս Վահրամիոսին, Անտիոքի կուրապաղատին[5] և դուքսին»: Փիլարտոսը կուրապաղատի աստիճանին և դուքսի պաշտոնին արժանացել է Նիկեփոր Գ Վոտանիատեսի (1078-1081 թթ.) կառավարման ժամանակ[6]: Ինչպես նշեցինք, 1078 թ. սահմանագիծ էր դուքսի առաջին և երկրորդ հիշատակությունների միջև, ուստի կարող ենք հետևեցնել, որ նա այս աստիճանը և պաշտոնը ստացել է 1078 թ.:

Կնիքներից մյուսը գտնվում է Վատիկանում, որի առաջնամասում նորից պատկերված է Ս. Թեոդորոսը, իսկ դարձերեսի վեցտողյան գրությունում Փիլարտոսը հիշատակված է որպես Բյուզանդիայի արևելյան զորքերի՝ սխոլերի[7] դոմեստիկոս (զորավար)[8] և պրոտոկուրապաղատ (այս տիտղոսը ստեղծվել է XI դ. և այն կրող պաշտոնյան զբաղեցնում էր առաջին կուրապաղատի՝ պրոտոկուրապաղատի աստիճանը)[9]: Նույն կնիքի մեկ այլ օրինակ պահվում է Էրմիտաժում[10]:

---

[1] *Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, էջ 213-214:*

[2] *Անտիոքի՝ սելջուկների կողմից 1084 թ. գրավման վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան Մատթեոս Ուռհայեցու երկում. «Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՇԼԳ (իմա՝ 1084 թ.- Ա. Ս.) առաւ Անտիոք քաղաքն ի քրիստոնէից վասն կի Սուլիման ոմն ամիրայ որդի Գթըլմշոյ... գտեալ կքաղաքն (իմա՝ Անտիոք-Ա.Ս.) անպատրաստս և ի Հալեպայ դիհէն ի գիշերի գողացաւ կքաղաքն Անտիոք. և Փիլառտոսն էր ի քաղաքն Ուռհա և յայնմ ժամու կօրք հեծելոց ոչ գոյր ի քաղաքն: ... Եւ լուեալ կայս ամենայն Փիլառտոսն՝ ոչինչ կարաց առնել, լուր ի յոգւոց հանեալ և դառնապես ապաշաւէր»: Մատթէոս Ուռհայեցի, էջ 224-225:*

[3] *Մատթէոս Ուռհայեցի, էջ 206-207:*

[4] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, Ե., 2005, էջ 419:*

[5] *Կուրապաղատը բյուզանդական արքունիքի բարձրագույն աստիճաններից մեկն էր: Լատիներենից բառացի թարգմանված Curator palatii նշանակում է իշխանավոր, որը իրականացնում էր արքունի բոլոր գործառույթները: Կուրապաղատի պարտականությունների մեջ էր մտնում նաև անչափահաս կայսեր փոխարեն երկրի կառավարումը: Այս տիտղոսը IX դ. վերջից շնորհվում էր օտարերկրացի իշխանավորներին: Տե՛ս Միքայել Ատտալիատես, էջ 235-236, ծանոթ. 187:*

[6] *Տե՛ս Шандровская В., նշվ. աշխ., էջ 41:*

[7] *«Սխոլը» բյուզանդական վարձկան զորքերի չորս գնդերից (տագմա, սինտագմա) մեկն էր: Նրանում ծառայողները կոչվում էին սխոլարիոս, հրամանատարը՝ սխոլերի դոմեստիկոս: Ժ դարից սխոլերի դոմեստիկոս տերմինը նշանակում է սպարապետ, համայն բյուզանդական բանակի հրամանատար: Այդպիսիք էին երկուսը՝ Արևմուտքի և Արևելքի սխոլերի դոմեստիկոսները: Տե՛ս Միքայել Ատտալիատես, էջ 224, ծանոթ. 142: Հմմտ. Мохов А., Доместики схол запада второй половиных X начала XII в. по данным сфрагистики, «Античная древность и средние века», Екатеринбург, 2008, вып. 38, с. 165.*

[8] *Անանուն Եդեսացուն հայտնի է Փիլրատոսի դոմեստիկիոսի պաշտոն կրելը, և նա իր երկում այդ մասին վկայում է. «Սելևկիան, Տարսոնը, Անարկաբան, Մելիտենեն իր շրջակայքով և Անտիոքը գտնվում էին Փիլարտոս Դոմեստիկոսի ձեռքում, որը դրանք պաշտպանում էր թուրքերից», տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 12, Ասորական աղբյուրներ, Բ, Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, թարգմանությունը բնագրից առաջաբանը և ծանոթագրությունները՝ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 31:*

[9] *Տե՛ս Միքայել Ատտալիատես, էջ 236, ծանոթ. 187:*

[10] *Տե՛ս Шандровская В., նշվ. աշխ., էջ 41-42:*

Փիլարտոսը արևելյան զորքերի դոմեստիկոսի պաշտոնը և պրոտոկուրապաղատի աստիճանը ստացել է 1078-1086 թթ. ընկած ժամանակաշրջանում[1]:

Փիլարտոսին վերաբերող ևս երեք կնիքներ պահվում են Էրմիտաժի բյուզանդական հավաքածուում հետևյալ համարների ներքո՝ Մ-5515, Մ-3090 և 8002[2]:

Մ-5515 համարի ներքո պահվող կնիքի ճակատային մասում սուրբ զինվորի պատկերն է՝ «Սուրբ Դմիտրի» գրությամբ: Սուրբ Դմիտրին զինվորական հագուստներ է կրում, աջ ձեռքում պահում է նիզակ, իսկ ձախ ձեռքում՝ վահան: Դարձերեսին կա ութ տողից բաղկացած գրություն. «Փիլարտոս Վրախամիոս, կապադովկացիների պրոտոսպաթոր[3], իպատոս և տոպոտիրիտոս[4]»[5]: Բյուզանդական տիտղոսների շարքում պրոտոսպաթորը զբաղեցնում էր տասներկուերորդ տեղը: Եթե ընդունենք Փիլարտոսի մագիստրոսի և դուքսի աստիճանը ներկայացնող կնիքի ժամանակագրական ճշգրտումը Վ. Շանդրովսկայայի կողմից (1068-1071 թթ.), ապա վերոնշյալ կնիքի վրա գրված պրոտոսպաթոր տիտղոսը Փիլարտոսը ստացել էր, հավանաբար, ավելի վաղ՝ 1060-ականներին, քանի որ մագիստրոսի կոչումը բյուզանդական տիտղոսների շարքում զբաղեցնում էր 7-րդ տեղը[6]: Տոպոտիրիտոսների կնիքները հազվադեպ են հանդիպում: Ըստ Վ. Շանդրովսկայայի՝ հնարավոր է, որ այս երկու կնիքների վրա գրված կոչումները ևս (պրոտոսպաթոր, իպատոս, տոպոտիրիտոս, մագիստրոս և դուքս) Փիլարտոսը ստացել է 1071-1078 թթ. միջև ընկած ժամանակահատվածում[7]: Մեզ ևս հավանական է թվում այս տեսակետը, քանի որ 1071-1078 թթ. Փիլարտոսը արդեն գործում էր կայսրությունից անկախ և ձևավորում էր իր ինքնուրույն իշխանությունը: Նրան ժամանակավորապես հաջողվեց ետ մղել սելջուկների առաջխաղացումը և իր վերահսկողությունը հաստատել Կապադովկիայի վրա: Այս հանգամանքով պետք է բացատրել կայսրության կողմից Փիլարտոսին շնորհված կապադովկիացիների պրոտոսպաթորի, իպատոսի և տոպոտիրիտոսի պատվաստիճանները:

Մ-3090 համարի ներքո պահվող կնիքի ճակատային մասում պատկերված է սուրբ զինվոր՝ ամբողջ հասակով, աջ ձեռքում պահում է նիզակ, իսկ ձախ ձեռքում՝ վահան: Կնիքի եզրերով մակագրված է՝ «Սուրբ Թեոդոր»: Դարձերեսին հինգտողյան գրություն կա. «Փիլարտոս Վրախամիոս՝ կուրապաղատ և դուքս»: Կուրոպաղատի կոչման առկայությունը խոսում է այն մասին, որ կնքիը պետք է թվագրել բյուզանդական կայսր Նիկեփորոս Գ-ի ժամանակին (1078-1081 թթ.): Ըստ հետազոտողների՝ այս կնիքը Փիլարտոսը ստացել է Անտիոքի դուքս եղած ժամանակ, ոչ ուշ, քան 1081 թ: Վ. Շանդրովսկայայի կարծիքով, այս կնիքի առկայությունը հերքում է Փիլարտոսի՝ Եդեսիայի դուքս լինելու պնդումը, և նա հավանական է համարում, որ կուրապաղատ և դուքս գրությունը վերաբերում է Անտիոքում իշխելու ժամանակաշրջանին[8]:

Մ-8002 համարի ներքո պահվող կնիքի թվագրումը և բացատրությունը կատարել է Ն. Լիխաչևը: Կնիքի ճակատային մասում պատկերված է զինվոր՝ ամբողջ հասակով, աջ ձեռքում պահում է նիզակ, իսկ ձախ ձեռքում՝ վահան, զինվորը կրում է թիկնոց, որը կրծքի մոտ հանգուցված է, զինվորը երիտասարդ է, առանց մորուքի: Գրության մեջ նշվում է, որ նա Սուրբ Դմիտրի Սոլունսկին է: Հակառակ կողմում վեցտողյան գրությունը թեև վնասված է, բայց կարդացվում է այսպես. «Սու՛րբ Դմիտրի, օգնի՛ր քո ծառա Փիլարտոս Վրախամիոսին»: Ն. Լիխաչևը կնիքը թվագ-

---

[1] *Տե՛ս Dédéyan G., նշվ. աշխ., № 85:*

[2] *Տե՛ս Шандровская В., նշվ. աշխ., էջ 42:*

[3] *Տե՛ս պրոտոսպաթոր տիտղոսը կրողները կայսեր թիկնապահներն էին: Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 6, «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմանությունը բնագրից առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1970, էջ 212-213, ծանոթ. 10:*

[4] *Ռազմական աստիճան էր Բյուզանդիայում՝ տագմայի հրամանատարից անմիջապես հետո եկող և նրան ենթակա: Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 363, ծանոթ. 596:*

[5] *Տե՛ս Шандровская В., նշվ. աշխ., էջ 42-44:*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 42-44:*

[7] *Նույն տեղում, էջ 44:*

[8] *Տե՛ս Նույն տեղում, էջ 44-46: Հմմտ. Cheynet J.-Cl., նշվ. աշխ.., էջ 52:*

ռում է XI-XII դդ., սակայն Վ. Շանդրովսկայան իրավացիորեն թվագրման վերին սահմանը իջեցնում է մինչև 1090 թ., երբ Փիլարտոսը մահացել է[1]: Սակայն պետք է նշել, որ վերոնշյալ կնիքում կոչումների բացակայության պատճառով որևէ թվագրում առաջարկելն անհնար է:

Փիլարտոսի պրոտոսեբաստոսի աստիճանի և դոմեստիկոսի պաշտոնին արժանանալու մասին է խոսում Ժ. Կլ. Շենեի հրատարակած կնիքը: Կնիքի կենտրոնում ատամնաձև եզրագծով շրջափակված Ս. Թեոդորն է՝ դիմացից, ամբողջ հասակով, աջ ձեռքին՝ նիզակ, ձախ ձեռքը դրված է եռանկյունաձև վահանին: Մակագրությունը սյան տեսքով է, տեսանելի է աջ կողմում: Դարձերեսին հինգտողյան մակագրություն է. «Ֆիլարետոս պրոտոսեբաստոս և մեծ դոմեստիկոս Վրախամիս», ընդ որում, առաջին տողը խիստ վնասված է, իսկ վերջին տողը եզրավորված է գծիկներով[2]: Հավանաբար, Փիլարտոսը մեծ դոմեստիկոսի պաշտոնը և պրոտոսեբաստոս աստիճանը ստացել էր Նիկեփոր Գ Վոտանիատեսի (1078-1081 թթ.) կառավարման ժամանակ՝ ետմանազկերտյան շրջանում:

Մեկ այլ կնիք փաստում է Փիլարտոսի սեբաստոսի պատվաստիճանին և դոմեստիկոսի պաշտոնին արժանանալու մասին: Կենտրոնում կնիքի ատամնաձև եզրագծով շրջափակված է Ս. Թեոդորը՝ ողջ հասակով, իր սովորական դիրքով: Մակագրությունը՝ սյունաձև, տեսանելի է աջ կողմում: Դարձերեսին վեցտողյան բացատրություն է, ընդ որում, առաջին տողը դաշտից դուրս է, իսկ վերջին տողը՝ ջնջված. «Տե՛ր, օգնիր սեբաստոսին[3]՝ Ֆիլարետոսին և մեծ դոմեստիկոս Վրախամիսին»[4]: Փիլարտոսի սեբաստոսի բարձրագույն պատվաստիճանի արժանանալու մասին է վկայում նաև Միքայել Ասորին. «Եւ լուան Յոյնք և տուին Փիլարտոսին պարգեւս, և կոչեցին Սեւաստոս»[5]: Փիլարտոսը սեբաստոսի պատվաստիճանը, հավանաբար, ստացել է դարձյալ ետմանազկերտյան ժամանակաշրջանում՝ Նիկեփոր Գ Վոտանիատեսի (1078-1081 թթ.) կառավարման ժամանակ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ակներև է, որ բացի պատմական աղբյուրներից, Փիլարտոսի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև նրա անունով արճճե կնիքները ու նրան շնորհված պատվաստիճանները: Վերջիններիս շնորհման ժամանակաշրջանների ճշգրտումը հնարավորություն է տալիս հստակեցնելու հայազգի մեծ զորավարի ու գործչի գործունեությունը ժամանակի և տարածության մեջ:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Փիլարտոսը 1071-1078 թթ. ընկած ժամանակաշրջանում կայսրությունից արժանացել էր մագիստրոսի բարձր աստիճանին: Այդ աստիճանը կայսրության կողմից շնորհվում էր լավագույն զորահրամանատարներին: Փիլարտոսին հաջողվեց ետ մղել սելջուկների առաջխաղացումը և իր վերահսկողությունը հաստատել Կապադովկիայի վրա: Այս հանգամանքներով են պայմանավորված 1071-1078 թթ. ընթացքում կայսրությունից ստացած կարևոր նշանակություն ունեցող կապադովկիացիների պրոտոսպաթոր, իպատոս և տոպոտիրիտոս պատվաստիճանները: Անտիոքի դուքսի պաշտոնին և կուրապաղատի աստիճանին նա ամենայն հավանականությամբ արժանացել է 1078 թ.: Փիլարտոսը 1078-1081 թթ. միջակայքում ստացել է պրոտոսեբաստոսի աստիճան և մեծ դոմեստիկոսի պաշտոնը: Փիլարտոսի՝ արևելքում հաստատած գերակա դիրքի և հզոր իշխանության մասին են վկայում Նիկեփոր Գ Վոտանիատեսի կառավարման շրջանում Փիլարտոսի՝ 1078-1081 թթ. սեբաստոսի բարձրագույն պատվաստիճանին արժանանալու հանգամանքը: Ինչ վերաբերում է Բյուզանդիայի արևելյան զորքերի դոմեստիկոսի խաշտոնը և պրոտոկուրապաղատի աստիճանը ստանալուն, ապա Փիլարտոսը դրանք ստացել է 1078-1086 թթ. ժամանակաշրջանում:

---

[1] *Տե՛ս, Шандровская В., նշվ. աշխ., էջ 46-48:*

[2] *Տե՛ս Cheynet J.-Cl., նշվ. աշխ., էջ 55-56:*

[3] *Սկզբնական շրջանում բառը լատիներեն augustus-ի թարգմանությունն էր և այն տրվել էր Օկտավիանոս կայսեր: Հետագայում՝ X-XII դդ., տրվում էր բյուզանդական արքունիքի բարձրաստիճան անձանց՝ վերածվելով պատվաստիճանի: Տե՛ս Բարթիկյան Հ., Բյուզանդական տերմիններ, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 2, Ե., 2006, էջ 168:*

[4] *Cheynet J.-Cl., նշվ. աշխ., էջ 54:*

[5] *Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց, Յերուսաղէմ, 1871, էջ 399:*

Պետք է փաստել, որ Փիլարտոսին վերաբերող և նրան շնորհված պատվատիտղոսները և կնիքների առկայությունն ապացուցում են նրա հզորության և կարևորության մասին:

Арарат Степанян, ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ. В дополнение к историческим источникам важную информацию о Филарете Варажнуни передают также свинцовые печати с его именем и дарованные ему почетные ордена. Уточнение сроков предоставления последних позволяет определить географию и сферу деятельности великого армянского военачальника и значительной фигуры своего времени. Из указанных источников следует, что Филарет получил высокую степень магистра в Империи в 1071-1078 гг. Это звание присваивалось Империей лучшим военачальникам. Филарету удалось отразить наступление сельджуков и получить контроль над Каппадокией. Этими обстоятельствами обусловлено получение Филаретом в период 1071-1078 гг. почетных орденов протоспафария, ипата и topotērētēs каппадокийцев, имеющих существенное значение. В 1078 г. ему было присвоено звание Антиохийского принца и звание куропалата. В 1078-1081 гг. Филарет получил звание протосеваста и звание великого доместика (megas domestikos). О крепнущей позиции Филарета и сильной власти, созданной на Востоке, свидетельствует тот факт, что он был удостоен высочайшего ордена севаста во время правления Никифора III Вотаниата в 1078-1081 гг.

Филарету было присвоено звание доместика Восточных войск и звание протокуропалата в период между 1078-1086 гг.

Следует отметить, что список почетных званий, присужденных Филарету, разнообразен. Факт существования этих печатей доказывает большой авторитет и высокое положение Филарета.

Ключевые слова: *Филарет Варажнуни, исторические источники, надпись, печать, титул, Манцикерт, князь Антиохии, Византия.*

Ararat Stepanyan, THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS. In addition to historical sources, important information about Philaretos Brachamios is also conveyed by the lead seals with his name and the honorary orders bestowed to him. The precision of the periods of granting the latter enables to clarify the geography and scope of the activities of the great Armenian general and figure in time. It follows from the above that Philaretos received the high degree of magistros from the Empire in 1071-1078. This rank was awarded by the Empire to the best military commanders. Philaretos succeeded in repelling the Seljuk advance and gaining control of Cappadocia. The honorary orders of protospatharios, hypatos and topoteretes of the Cappadocians having essential significance and received by Philaretos in the period of 1071-1078 were conditioned by these circumstances. He was promoted to the position of the Prince of Antioch and the rank of kouropalates in 1078. Philaretos received the rank of protosebastos in 1078-1081 and the position of grand domestic (megas domestikos). Philaretos' superior position and powerful authority established in the East is evidenced by the fact of being awarded the highest order of sebastos during the reign of Nikephoros III Botaneiates in 1078-1081.

Philaretos was promoted to the position of domestikos of the Eastern Troops and the rank of protokouropalates in the period between 1078-1086.

It should be noted that the list of honorary titles concerning Philaretos and awarded to him is diverse. The fact of the existence of these seals proves Philaretos' strong authority and high position.

Key words: *Philaretos Brachamios, historical sources, inscription, seal, title, Manzikert, Duke of Antioch, Byzantium.*

1. «Փիլարտոս Վարաժնունի՝ պրոտոկուրապաղատ և դոմեստիկոս»[1]

2. «Փիլարտոս Վարաժնունի՝ Անտիոքի կուրապաղատ և դուքս»[2]

3. «Ֆիլարետոս պրոտոսեբաստոս և մեծ դոմեստիկոս Վրախամիս»[3]

[1] *Տե՛ս http://www.hellenicaworld.com/Byzantium/Person/en/PhilaretosBrachamios.html (մուտք՝ 30.05. 2019); Համմ. Dédéyan G., նշվ. աշխ., № 85:*

[2] *Տե՛ս Dédéyan G., նշվ. աշխ., № 84:*

[3] *Տե՛ս նույն տեղում, № 86:*